

**ԲԱԶՄԱԲԱՂԱԴՐԻՉ ԲԱՅԱԿԱՆ ԴԱՐՉՎԱԾԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ
ԸՆԴՄԻՋԱՐԿՈՒՄԸ**

Այբերտ Պողոսյան

DOI: <https://doi.org/10.58726/langlit-298-311>

Հանգուցային բառեր և արտահայտություններ. մենաբառ, բազմաբառ, դասակարգում ըստ քանակի, դասակարգում ըստ շարահյուսական հարաբերության, համազոր և անհամազոր կապակցություններ, կապական կապակցություն, նախադասության անդամ չհամարվող, նախադասության անդամ համարվող

Նախաբան: Ներկա հոդվածում մեր ուսումնասիրության նյութը բազմաբաղադրիչ բայական դարձվածային միավորների ընդմիջարկումն է:

Ուսումնասիրության հիմնական նպատակն է գիտականորեն արժևորել բազմաբաղադրիչ բայական դարձվածային միավորների ընդմիջարկումը:

Հաշվի առնելով վերոնշյալ նյութի ուսումնասիրման ամբողջական քննության բացակայությունը՝ մեր առաջադիր խնդիրներն ենք համարել՝

- ա) քննել բազմաբաղադրիչ բայական դարձվածային միավորների ընդմիջարկումը,
- բ) դասակարգել բազմաբաղադրիչ բայական դարձվածային միավորներն ըստ ընդմիջարկումների քանակի և շարահյուսական հարաբերության:

Հոդվածը բազմաբաղադրիչ բայական դարձվածային միավորների ընդմիջարկումը համակարգված բնութագրելու փորձ է, որն առայժմ բացակայում է մեր իրականության մեջ:

Թեմայի արդիականությունը ժամանակակից հայերենի դարձվածային միավորների առանձնահատկությունների քննության նկատմամբ ուսումնասիրողների աճող հետաքրքրությունն է:

Ստացված տեսական և գործնական արդյունքները կարող են օգտագործվել «Ժամանակակից հայոց լեզու (Դարձվածաբանություն և բառարանագիտություն)» դասընթացի ուսուցման գործընթացում:

Ուսումնասիրության համար կիրառել ենք նկարագրական, վերլուծական, համադրական, երբեմն էլ՝ վիճակագրական մեթոդները:

Հոդվածի բովանդակությունը: Էդ. Ադայանը «Արդի հայերենի բացատրական բառարանում» *ընդմիջարկություն* եզրույթը բացատրում է. «Հավելում, ներմուծում գրվածքի, շարադրանքի մեջ» [1, 402]:

Էդ. Մկրտչյանը ընդմիջարկությունը սահմանում է «որպես շարահյուսական որոշակի կապակցություններում հանդիպող կառույցներ, որոնց չձևավորված քերականական կապերի և տրոհման հատկանշով հանդես գալու պատճառով տրոհող կառույցներ ենք անվանում» [4, 1]:

Նշենք, որ երկու դեպքում էլ խոսքը ընդհանրապես ընդմիջարկման մասին է:

Դարձվածքների ընդմիջարկմանն անդրադարձել է Պ. Բեդիրյանը «Հայոց լեզվի դարձվածաբանություն» գրքում: «Դարձվածքն անընդմիջարկելի՝ է» հարցին հեղինակը պատասխանում է. «Շատ հետազոտողներ այս հարցին դրական պատասխան են տալիս՝ հիմք ընդունելով դարձվածքի կառուցվածքային կուռությունը: Այս վերջին հանգամանքը բազմիցս նշել ենք նաև մենք: Բայց, այդուհանդերձ, կողմնակից չենք դարձվածքները բոլորովին անընդմիջարկելի համարելուն» [3, 171]:

Լեզվաբանը ընդմիջարկում է համարում ոչ միայն այն բառն ու բառերը, որոնք հավելադրվում են դարձվածքի ներսում, այլ նաև նրանք, որ ավելանում են նրանից առաջ կամ հետո: Այսպես *բեռը տանել* կապակցության **իր բեռը տանել**, **իր ծանր բեռը տանել**, **իր ծանր բեռը լուռ տանել** հավելումներով դեպքերի հավելված (*իր*, *իր ծանր*, *իր ծանր* և *լուռ*) միավորները նա համարում է ընդմիջարկություններ: Կամ՝ *էն գլխից* դարձվածքի *էն գլխից էլ*, *կամուրջներն այրել* կառույցի **բոլոր կամուրջներն այրել** **եստևում**, **բոլոր կամուրջներն այրել** **իր** **եստևում** հավելումով դեպքերի ընդգծված (*էլ*, *բոլոր* և *եստևում*, *բոլոր* և *իր* *եստևում*) միավորները ևս դիտում է ընդմիջարկություններ [3, 171]:

Պ. Բեդիրյանին համակարծիք է նաև Լ. Ավետիսյանը՝ նշելով,

որ դարձվածքների և՛ գերադաս, և՛ ստորադաս անդամները կարող են ընդմիջարկվել հավելադրություններով. *ուրազի պես միջտ իր կողմը տաշել, մագնիսի պես դեպի իրեն ձգել, թիթեռնիկների նման անվերջ շուրջը պտտվել, կրիայի պես դանդաղ ընթանալ, օձի նման հագար շապիկ փոխել, մոմի նման ամեն կողմ շուռ տալ, թաշկինակի պես հաճախակի փոխել, սնկի նման արագ աճել, ուրվականների նման անվերջ հետապնդել* (ընդմիջարկվել են դարձվածքների գերադաս բաղադրիչները), *գիշերաշրջիկ լուսնոտի պես դեզերել, ոչխարի հոտի պես (մեկին) հետևել, մի դռան երկու շան պես յուր զնալ* (ընդմիջարկվել են դարձվածքների ստորադաս բաղադրիչները) [2, 39]:

Սույն հոդվածում մենք կանդրադառնանք բազմաբաղադրիչ (չորս և ավելի բաղադրիչներով) բայական դարձվածային միավորների ընդմիջարկմանը՝ քննելով միայն այն դեպքերը, երբ ընդմիջարկումը կատարվել է կառույցի ներսում: Այս տեսանկյունից առանձնացրել ենք վերոնշյալ կապակցությունների երկու տեսակ՝

1. մեկ ընդմիջարկումով բազմաբաղադրիչ բայական դարձվածային միավորներ, ինչպես՝ Չէ, չբերեմ, պետք չի, *աչքիդ լույսն էլ է տեղը, ձեռք էլ է տեղը, ոտք էլ...* (ՀՄՏ, 177): ...տղաների *գլխին կարծես սառը ջուր լցրին* (ՎԱԵ4, 135):

2. երկու ընդմիջարկումով բազմաբաղադրիչ բայական դարձվածային միավորներ, այսպես՝ Այդ հուսախաբ սթափությունից հետո կրկին *սգի սև քողը պատում էր նրանց սրտին ու հոգուն...* (ԱԵ, 332): Գոհարը երբեք հասկանալ չկարողացավ, թե ասածո *չոռոտի վրա ամուսնու սիրտը ո՞նց տաքացավ* (ՎԱԵՏՏՅՎ, 118):

Նշենք, որ առաջին խմբին պատկանող ընդմիջարկությունները քանակային առումով զգալիորեն գերազանցում են երկրորդ խմբի ընդմիջարկություններին:

Մեկ ընդմիջարկումով բազմաբաղադրիչ բայական դարձվածային միավորներում կարող են ընդմիջարկվել կառույցի՝

ա) Առաջին բաղադրիչը մյուսներից¹: Այսպես՝ Եթե էդպես է,

¹ Բաղադրիչների հերթականությունը տրվում է ըստ բառարանային դասավորվածության: Այսպես՝ « հագարավոր անմեղ մարդկանց

թող *ալլահը նրա թուրը կտրուկ անի* (ՀՄԱԶՀ3, 206): Այս նախադասության մեջ *ալլահը թուրը կտրուկ անի* կառույցի առաջին բաղադրիչը (ալլահը) ընդմիջարկվել է մյուս բաղադրիչներից:

բ) Առաջին և երկրորդ բաղադրիչները մյուսներից: Օրինակ՝ Բայց հենց որ մտավ յուր երկրի սահմանները, հենց որ ոտքը դրեց հայրենի հողի վրա, նրա սիրտը թունդ եղավ, *երակների մեջ կարծես նոր արյուն վազեց* (ԲԱԱԵԱԿ, 140): Այս նախադասության մեջ *երակների մեջ նոր արյուն վազել* կապակցության առաջին և երկրորդ բաղադրիչները (*երակների* և *մեջ*) ընդմիջարկվել են մյուսներից:

գ) Վերջին բաղադրիչը մյուսներից: Այսպես՝ տան տիրոջս մտիկ արա՛, է՛. *երկար ու բարակ ո՛նց ա մեկնվել*.... (ՊՊ1, 296): Այս նախադասության մեջ *երկար ու բարակ մեկնվել* դարձվածային միավորի վերջին բաղադրիչը (*մեկնվել*) ընդմիջարկվել է մյուսներից:

Կապակցության բաղադրիչները միմյանցից ընդմիջարկող միավորը կարող է լինել՝ 1. մենաբառ, 2. բազմաբառ, 3. մենաբառ և բազմաբառ²:

1. Մենաբառ ընդմիջարկությունները լինում են՝

1.1. նախադասության անդամ չհամարվող. Օրինակ՝ Այժմ հարգանքի, պատկառանքի ու կախվածության բեռն էլ չկար, փոխարենն անբացատրելի մի թեթևություն էր, միայն հետ չգար անիծվածը, չհայտնվեր կրկին, աստված չանի, եթե *աշխարհը գլխիդ սև էլ չանի*, ապա ամոթից ավելի լավ է թողնել ու գաղթել, քան երևալ աչքին (ԶԽՄ, 149):այդ մտքից Սարգսի *արյունը կարծես կանգ առավ երակներում* (ՎԱԵ4, 90): Ի՞նչ ես ուզում ինձանից, հենց կիմանայիր մեռել եմ, ո՞ւր եկար, *հետևիցդ հու կարմիր խնձոր չեմ դարկել* (ՄԴԿ, 24):մեր Արշավիրին էլ *աստված բալքի խելք ու քյամալ տա*.... (ՊՊ1, 323):

արյունը մնում է նրա խղճի վրա (ՀՄԱԶՀ2 – 163): Նախադասության մեջ *արյունը խղճի վրա մնալ* դարձվածային միավորի առաջին և չորրորդ (*արյունը* և *մնալ*) բաղադրիչները ընդմիջարկվել են երկրորդից և երրորդից (*խղճի* և *վրա*):

² Այս դեպքում մենաբառ և բազմաբառ միավորները հանդես են գալիս միասին:

1.2. Նախադասության անդամ համարվող. այսպես՝ Թող *այլահը չորացնի մեր կանանց արգանդը*, եթե չինայենք քո զավակներին ու քեզ (ՄԽՄՄ, 369): Նրա դեմքը շողում էր մաքուր մի լույսով, *աչքերից չարաճճի կայծեր էին դուրս թռչում...* (ԶԴԱՎ, 47): Էդ ո՞վ է դարդը պատմելիս մորից ծնվել նորից, որ *գլխիդ որդերն իզուր տեղահան արիր* (ԱՂՊ, 197):

1.3. Նախադասության անդամ չհամարվող մենաբառ և նախադասության անդամ համարվող մենաբառ. օրինակ՝ Բարձր հրամանատարությունն ու քաղաքի պարետը հաճախ են այնտեղ սեղան նստում և հրամանատարության *աչքն էլ մեր ֆելդֆելբելի ձեռին է* (ՀՄԱԶԶ1, 69-70):

2. Բազմաբառ ընդմիջարկությունները կարող են լինել՝

2.1. նախադասության անդամ համարվող համազոր բազմաբառ կառույց. օրինակ՝ *...հեղափոխական գործչի կինն իրավունք չունի նրա մահից հետո իր կյանքը կապել որևէ սովորական հողագործի հետ* (ԶԽՄ, 210):

2.2. Նախադասության անդամ համարվող համազոր բազմաբառ և չհամարվող մենաբառ կապակցություն. օրինակ՝ Մենք դեռ ստիպված կլինենք *ուտել նրանց եփած դառն ու թանձր շիլան* (ԼՀՀ, 142):

2.3. Նախադասության անդամ համարվող կայուն բազմաբառ կառույց. այսպես՝ Այդ նամակը կարծես *եռացրած ջուր լցրեց որսորդ Արամի երակները* (ՎԱԵ4, 539): Հանրապետության քրեական հետախուզության և օպերատիվ ծառայությունների պետերը, մինիստրության քաղաքաժնի պետը, մինիստրի տեղակալները, այնուհետև մինիստրը գործը համարեցին արտակարգ դիպված և *հուր ու կրակ էին ժայթքում մայրը Բագրատունու գլխին* (ՄՄԽՊԱ, 100): *...եկել է ոտք է գցում մղդսի Կյուրեղի որդու հետ* (ԱԵ, 356):

2.4. Նախադասության անդամ համարվող անհամազոր բազմաբառ կապակցություն. օրինակ՝ Ինչո՞ւ մի տեղ լալիս են, մյուս տեղ՝ ուրախանում, մի տանը հրճվում են, *մյուս տանը՝ ախ ու վուշ անում* (ԲԱԱԵԱԿ, 368): Հայրն էլ, տեսար, չէ՞, *նայում էր խեղճ աղջկան՝ ոնց որ թուրքը խոզի մսին* (ԱԵ1, 524):

2.5. Նախադասության անդամ համարվող տարասեռ բազմաբառ կառույց. այսպես՝ Թող հայ ժողովրդի *անեծքը ծանրանա ձեր ապականված հոգիների վրա* (ՄԽՄՄ, 732): ...այդ մարդը դեռ *չէր վերջացրել աշխարհի հետ իր բոլոր հաշիվները* և դեռ ամեն ինչի վրա թքած չունեիր.... (ԿՏՆ, 190):

2.6. Նախադասության անդամ համարվող կապական բազմաբառ կապակցություն. օրինակ՝ Եվ ինչո՞ւ դու *բախտը կապեցիր ինձ պես անխելքի հետ* (ՀՄԱԶՀ, 445): Գնա՛, գլուխդ քարը, ես միայն էն խեղճ աղջկանն եմ ավստում, որ իր *բախտը կապել է քեզ պես հիմարի հետ* (ՀՄԱԶՀ, 46):

2.7. Նախադասության անդամ համարվող դարձվածային բազմաբառ կապակցություն. այսպես՝ Թողություն կանես, Բեքիր չաուշ, ես *խմիչքի հետ մի քիչ գլուխ ունեմ* (ՀՄԱԶՀ, 633):

2.8. Նախադասության անդամ չհամարվող բազմաբառ կապակցություն. օրինակ՝ Եվ Միքայել Թվատ կայսրի *խոսքերը, ինչպես ասում են, ծակ կարասն էին ընկնում* (ԶԽՎՄ, 21):

2.9. Նախադասության անդամ չհամարվող բազմաբառ կառույց. Այսպես՝ Նա *ում սրնգի տակ էլ ասես կպարի* (ԼՀՀ, 254):

3. Երրորդ խմբի ընդմիջարկությունները կարող են դասակարգվել մի քանի ենթախմբերով.

3.1. Նախադասության անդամ համարվող կապական բազմաբառ և մենաբառ կապակցություն. օրինակ՝ ...գալիս էին ջաղացը հատկապես Օհան-ամու ընտիր թությունից մի չիբուխ քաշելու և հնությունից *մի երկու խոսք իրար հետ սրտանց խոսելու....* (ԱԻԵԺ4, 16):

3.2. Նախադասության անդամ համարվող կապական բազմաբառ և չհամարվող մենաբառ կապակցություն. օրինակ՝ Դեմքը մեզանից դանդաղ շրջեց. մեր քննադատությունն ուրեմն չէր ընդունում, *լեզվի տակ մեր դեմ ուրեմն խոսք ունեիր* (ՀՄՏ, 267):

3.3. Նախադասության անդամ չհամարվող մենաբառ և համարվող կայուն բազմաբառ կապակցություն. օրինակ՝ Դրանցից է *բացվել և Եվրոպա աշխարհի աչքը մեզ վրա* (ՄԱՃՀ, 639):

3.4. Նախադասության անդամ չհամարվող մենաբառ և համարվող մենաբառ ու կապական բազմաբառ կապակցություն. օրի-

նակ՝ ...հայերիս *պատիվն էլ օխտն օտարի առջև նոյ տակ ես գցում* (ՌՊԵ, 580):

Շարահյուսական հարաբերության տեսանկյունից մեկ ընդմիջարկումով բազմաբաղադրիչ բայական դարձվածային միավորներում մենաբառ ընդմիջարկությունները նախադասության կազմում կարող են կատարել շարահյուսական տարբեր պաշտոններ.

ա) Ենթակա՝ Ո՛վ քեզ ստիպեց, որ *գետին չհասած դու հանես նոսքերդ* (ՀԽԵՄ, 333): ...եղ թավուր բաների միջին նրա *ցերեկվան ման էկած տեղերը Գարեգինը քշերն ա ման էկել* (ՊՊ1, 274): – Է՛, այ որդի, Մարոն ուրիշի տան ճրագ է, *օջախիս ծուխը դու պիտի վառ պահես*,– ասում է քեռիս, որի համար տղա ժառանգ չունենալը մեծ վիշտ է (ՀՄԱԶՀ1, 9):

բ) Բաղադրյալ բայական ստորոգյալի բաղկացուցիչ մաս՝ ստորոգելի՝ Վերջինս տարիների հետ ավելի ու ավելի էր հակվում դեպի իր ասպետի խոսքն ու գործը, *աշխարհին իր տիրոջ աչքերով էր սկսում նայել...* (ԶԽԵՎԶԴ, 318): Խանը օգտագործել է ուզում իմ բացակայությունը և *մի կրակոցով երկու որս է ուզում գցել* (ՄԱՃՀ, 165): ... սկսեց այնպիսի հարցերի քննության մեջ մտնել, որոնք խավարի անդնդում գործվածները *լույս աշխարհ էին կամենում դուրս բերել...* (ԱԵ, 167):

գ) Անվանաբայական բաղադրյալ ստորոգյալի բաղկացուցիչ մաս՝ ստորոգելի՝ Դու էլ *նրա եղանակով հերիք է պար գաս* (ԱԵ, 345): Դե, ուրեմն, Ռուբենն *իրեն կարող էր զգալ յոթերորդ երկնքում* (ԱԵ1, 215):

դ) Որոշիչ՝ Երբ Գագիկը տեսավ, որ նրա *բերանից ոչ մի բառ դուրս չի գալիս*, դարձավ դեպի յուր ձիավորները... (ԲԱԱԵԱԿ, 28): ... ի՞նչ են գտել աղջիկներն այդ աղքատիկ հոգով, գծուծ մարդու մեջ, որ իրենց *բախտը կապել են այդ լուվելասի հետ* (ՎԲ1, 222): Այդ լեգեոնը, որ այնպես արիաբար կռվում էր ֆրանսիական զորաբանակի շարքերում՝ իր հայրենիքի ազատության համար, մի թե այժմ *չի մտնի իր հայրենի դրոշի տակ* (ՀՄԱԶՀ2, 338):

ե) Հատկացուցիչ՝ Մի ակնթարթում *քողն ընկնում է նրա աչքերի վրայից* և ամեն ինչ պարզ է դառնում (ԶԴԱՎ, 34): Լևոնի՛կ, Գագիկին *պահպանիր քո աչքի լույսի պես*, զիշերը չորս աչքով

դիտիր, ցերեկը՝ երկու և վա՛յ քեզ, եթե նրա մազին դիպչող լինի (ԲԱԱԵԱԿ, 297): Թուրքերը հիմա Անդրկովկասյան կառավարության հետ խնամի-խնամի են խաղում, իբր թե հաշտություն են ուզում, բանակցություններ են վարում, բայց դա խաբեություն է, ախպերս, *փափուկ բարձ են դնում մերոնց գլխի տակ* ու թաքուն պատրաստվում են.... (ՀՄԱԶՀ1, 178-179): ...նրա հաղորդած այդ *գույժը մուրճի նման իջավ տղաների սրտերին* (ՎԱԵԿ, 491):

զ) Ուղիղ խնդիր՝ Ապա գնում ես *գլխին տալիս՝ կուտակածը ձեռքից առնում ես* (ԶԽԶՄ, 75): Հետզհետե Գագիկի աչքերը ծանրացան և *քնի հրեշտակը նրան յուր գիրկն առավ* (ԲԱԱԵԱԿ, 297): *Խելք ու միտքը տվել էր կայքերը շատացնելուն....* (ԱԵ, 66):

է) Հանգման անուղղակի խնդիր՝ *Աստված քեզ երկար կյանք տա*, ներո՛ղ եղիր (ՄԽՄՄ, 198): Բարի ես եկել, պարոն լիագոր, մեր աչքի, մեր գլխի վրա տեղ ունեք, տունը ձերն է, սաղ ըլնիք, *աստված ձեզ երկար կյանք տա* (ՀՄԱԶՀ1, 22):

ը) Չափի պարագա՝ *Արևն իր հրե թները կամաց-կամաց կծկում էր* (ՄԴԿ, 62): Մի օր, հինգ օր, տասը օր, տեսանք էս հարսը ձեռքը *սկի մի բանի չի տալիս* (ՄԽՄՄ, 169):

թ) Ձևի պարագա՝տեսնենք, թե *«բախտի անիվն» ինչպե՞ս շուռ կգա* (ԱՀՇ, 54): ...հասկանում էր, որ....սուլթանի *բարկությունը հանկարծակի կպայթի իր գլխին* (ՄԽՄՄ, 725): Թատրոն չկա, կինոն էլ սկսնակ է, դեռևս չի կարող *երկու ոտքի վրա ամուր կանգնել* (ՄՄԽՊԱ, 192): Հետախուզության մեջ Ապետն *իրեն այնպես է զգում, ինչպես ձուկը ջրում....* (ՀՄԱԶՀ3, 135):

ժ) Ժամանակի պարագա՝ Բայց ահա, այդ նույն *գայլերն այժմ հազել են գառան մորթի* (ՀՄԱԶՀ3, 296): Նախանձություն է, է՛, անտերը ընկեր է փնտրում իր կեսը նրան տալու... որ ասում են *լեզուն ցավող ատամին է միշտ դիպչո՞ւմ...* (ԱՂՊ, 181):

Մեկ ընդամիջարկումով բազմաբաղադրիչ բայական դարձվածային միավորներում բազմաբառ ընդամիջարկությունները կարող են կազմված լինել նախադասության տարբեր անդամների գուգադրումից.

ա) Որոշիչ, որոշիչ՝ Ուր տարի *աշխարհի քարտեզի վրա բարդ մի զիզգազ անելուց* հետո վերադարձել էր Թիֆլիս (ԶԽՈԷՄԱ, 27):

բ) Ժամանակի պարագա, ձևի պարագա՝ Խնամի Նուբարը խոստանում է, որ մի լավ գառ նորից մատաղ կանի, երբ մենք կառողջանանք ու կվերադառնանք գյուղ, որպեսզի աստծու *այքը միշտ այսպես քաղցր լինի մեզ վրա* (ՀՄԱԶՀ, 81):

գ) Ժամանակի պարագա, որոշիչ՝ Ռուսական հրամանատարության *այքն ու ականջը միշտ այս կամուրջի վրա էր*, մինչև որ գրավվեց Սուշը (ՀՄԱԶՀ, 177):

դ) Ժամանակի պարագա, հատկացուցիչ՝ Դե, ի՞նչ խոսք. մեղիքները շինականներին էլ են մեջ խառնում, թե ճշմարիտը կուգես, կոփվների *կուժն ու կուլան միշտ մեր գլխին է կոտրվում* (ԱԻՕ, 62):

ե) Հատկացուցիչ, որոշիչ՝ Մեր պառլամենտի առաջին ընտրություններն ու Հայաստանի հանրապետության առաջին տարելիցը *կանոնեն մեր հերոսական պատմության մեջ ոսկե տառերով* (ՀՄԱԶՀ, 591): *Վառեց ու բորբոքեց հողագուրկների արդար վրեժը* (ԱԻԵԺ, 16):

զ) Ստորոգելի, որոշիչ, որոշիչ՝ Դվինի ճակատամարտից հետո Գագիկ Արծրունու *սրտի մեջ սկսել էր մի ինչ-որ որդ շարժվել*, որ գիշեր-ցերեկ հանգստություն չէր տալիս (ԲԱԱԵԱԿ, 223):

է) Հատկացուցիչ, որոշիչ, հատկացուցիչ՝ Որպեսզի մոնղոլական սիբիրախտը *չոքի ուղտի նման իր ծաղկած Կիլիկիայի դռանը՝* նկարիչ-բանաստեղծ-օրենսդիր-գորավար Սմբատ Գունդստաբլ սպարապետը ձիավոր իր շքախումբը դեսպանության վարգեց.... (ՀՄԵ, 96):

ը) Հատկացուցիչ, հատկացուցիչ, որոշիչ՝այնպես ես ասում վերջ, կարծես *խաչ ես քաշում քո կյանքի ամենակարևոր բանի վրա* (ԱԵ1, 454):

թ) Որոշիչ, որոշիչ, հատկացուցիչ, հատկացուցիչ՝ Դաշնակից բանակի հրամանատարությունը հավատում է ավագակ Շենքի փաշային, որի *ձեռքերը թաթախված են հազարավոր հայ կանանց ու երեխաների արյան մեջ* (ՀՄԱԶՀ, 334):

Երկու ընդմիջարկումով բազմաբաղադրիչ բայական դարձվածային միավորները անհամեմատ սակավ են հանդիպում: Այս դեպքում երկու միջարկություններն էլ սովորաբար մենաբառ են լինում: Այսպես «Երիտասարդական *արյունը սկսեց բորբոքվել նրա երակ-*

ների մեջ և աչքերը լցվեցին անհամբերության կրակով (ԲՄԱԵԱԿ, 332)» նախադասության մեջ *արյունը երակների մեջ բորբոքվել* դարձվածքի բաղադրիչների միջև երկու ընդմիջարկում է հանդես եկել՝ *սկսեց* և *նրա*, որոնք երկուսն էլ մենաբառ են և նախադասության անդամ՝ ստորոգելի և հատկացուցիչ: Այլ դեպքում երկու մենաբառ ընդմիջարկություններից մեկը կարող է նախադասության անդամ չլինել: «Եվ թող չորանա այն տմարդի ձեռքը, որ բարձրացել է մեր խաս միրի վրա, *Խուղեի կրակը թող թափվի նրա տան ու տեղին*, և նրա կանայք մոխիր ցանեն իրենց գլխների (ՀՄԱԶՀԶ, 121)» նախադասության մեջ ընդմիջարկություններից առաջինը՝ *թող*, նախադասության անդամ չէ:

Եզակի դեպքերում հանդիպում են բազմաբաղադրիչ բայական կապակցություններ, որոնց բաղադրիչներն ընդմիջարկող երկու միավորները կամ դրանցից մեկը մեկ բառով չեն արտահայտված լինում: Այսպես՝ «Դե որ դուք, պարոն գնդապետ, եղպես հարեհաս եղաք ինձ, *աստված էլ թող ձեր մեկը միշտ եղպես երկուսն անի*» նախադասության մեջ հանդես եկած ընդմիջարկություններից առաջինը կազմված է երեք բառից (նախադասության անդամ չհամարվող բազմաբառ, նախադասության անդամ համարվող մենաբառ), երկրորդը՝ նախադասության անդամ համարվող անհամագոր երկու բառից: Իսկ «Տեսա, որ *գլուխս նորից դնում եմ մի անիմաստ գործի տակ* (ԶԽՄ, 423)» նախադասության մեջ ընդմիջարկություններից միայն երկրորդն է երկու՝ նախադասության անդամ համարվող համագոր բառերից բաղկացած:

Եզրակացություն: Ընդմիջարկությունները հայ լեզվաբանների կողմից մանրակրկիտ ուսումնասիրության չեն ենթարկվել: Դարձվածային միավորների ընդմիջարկմանը անդրադարձել են եզակի ուսումնասիրողներ, այն էլ հպանցիկ:

Ներկա հոդվածում մենք քննել ենք բայական բազմանդամ (չորս և ավելի բաղադրիչներով կազմված) դարձվածքները երկու սկզբունքով՝ ըստ քանակական հատկանիշի և ըստ շարահյուսական հարաբերության:

Բայական բազմանդամ դարձվածային միավորները առավել հաճախ հանդիպում են մեկ ընդմիջարկումով: Վերջիններս կարող

են լինել մենաբառ և բազմաբառ, որոնք կարող են լինել նախադասության անդամ կամ չլինել որպես այդպիսին: Ընդմիջարկությունները խոսքում կարող են կատարել նախադասության գլխավոր և երկրորդական անդամների դեր:

Երկու ընդմիջարկումով բազմաբառ բայական դարձվածային միավորները սակավ են հանդիպում: Այս դեպքում ևս ընդմիջարկող միավորները կարող են լինել մենաբառ և բազմաբառ, կատարել նախադասության որևէ անդամի դեր կամ նախադասության անդամ չլինել:

DOI: <https://doi.org/10.58726/langlit-298-311>

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աղայան Է. Բ., Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան» հրատ., Երևան, 1976, 1615 էջ:
2. Ավետիսյան Լ. Ն., Համեմատություն – դարձվածային միավորները ժամանակակից հայերենում, Երևան, «Էդիթ Պրինտ» հրատ., 2018, 184 էջ:
3. Բեդիրյան Պ. Ս., Հայոց լեզվի դարձվածաբանություն, Երևան, «Լույս» հրատ., 1973, 231 էջ:
4. Մկրտչյան Է. Ս., Ընդմիջարկությունները որպես քերականական կապակցությունները տրոհող կառույցներ գրաբարում // Պատմա-բանասիրական հանդես, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատարակչություն, 2007, 3 (176), էջ 143-154, Առանձնատիպ, 12 էջ:

Աղբյուրների և դրանց համառոտագրությունների ցանկ

Աղավնի, Երկեր երկու հատորով, հատոր 1, Երևան, 1981 – ԱԵ1:

Ավետիք Իսահակյան, Երկերի ժողովածու, 6 հատորով, հատոր 4, Երևան, 1975 – ԱԻԵԺ4:

Ատրպետ, Երկեր, Երևան, 1964 – ԱԵ:

Արտավազդ Հովակիմյան, Շրջադարձ, Երևան, 1976 – ԱՀՇ:

Արտաշես Ղահրիբյան, Պատրանք, Երևան, 1983 – ԱՂՊ:

Բագրատ Այվազյանց, Աշոտ Երկաթ, Անիի կործանումը, Երևան, 1964 – ԲԱԱԵԱԿ:

Զարգանդ Դարյան, Արծիվ Վասպուրականի, Երևան, 1965 – ԶԴԱՎ:
 Զորայր Խալափյան, Եվ վերադարձնելով ձեր դիմանկարը, Երևան,
 1978 – ԶԽԵՎԶԴ:
 Զորայր Խալափյան, Միջնաշեն, Երևան, 1991 – ԶԽՄ:
 Զորայր Խալափյան, Որտե՞ղ էիր, մարդ աստծո, Երևան, 1983 –
 ԶԽՈՒՄԱ:
 Զորայր Խալափյան, Ջերմանց միսիթարություն, Երևան, 1979 –
 ԶԽԶՄ:
 Զորայր Խալափյան, Վասիլ Մեծ, հայ կայսր Բյուզանդիայի կամ
 կճուճների թագավորը, Երևան, 1995 – ԶԽՎՄ:
 Լևոն Նուրունց, Հայրեր, Երևան, 1970 – ԼՀՀ:
 Կամարի Տոնոյան, Նիգուլը, Երևան, 1974 – ԿՏՆ:
 Հայկ Խաչատրյան, Երվանդ Սակավակյաց, Երևան, 1989 – ՀԽԵՄ:
 Հարություն Մկրտչյան, Անհայտ զինվորի հիշատակարանը, գիրք
 առաջին, Երևան, 1969 – ՀՄԱԶՀ1:
 Հարություն Մկրտչյան, Անհայտ զինվորի հիշատակարանը, գիրք
 երկրորդ, Երևան, 1973 – ՀՄԱԶՀ2:
 Հարություն Մկրտչյան, Անհայտ զինվորի հիշատակարանը, գիրք
 երրորդ, Երևան, 1975 – ՀՄԱԶՀ3:
 Հրանտ Մաթևոսյան, Երկեր 2 հատորով, հատոր երկրորդ, Երևան,
 1985 – ՀՄԵ2:
 Հրանտ Մաթևոսյան, Տերը, Երևան, 1983 – ՀՄՏ:
 Մաթևոս Դարբինյան, Կիկոսը, Երևան, 1983 – ՄԴԿ:
 Մկրտիչ Սարգսյան, Խաղաղություն պատերազմից առաջ, Երևան,
 1981 – ՄՍԽՊԱ:
 Մովսես Արազի, Իսրայել Օրի, Երևան, 1964 – ԱԻՕ:
 Պերճ Պոռչյան, Երկերի ժողովածու 7 հատորով, հատոր 1, Երևան,
 1962 – ՊՊ1:
 Ռաֆայել Պատկանյան, Երկեր (ՀԴԳ), Երևան, 1980 – ՌՊԵ:
 Սերո Խանգաղյան, Միսիթար սպարապետ, Երևան, 1963 – ՄԽՄՍ:
 Սուրեն Այվազյան, Ճակատագիրն հայոց, Երևան, 1989 – ՍԱՃՀ:
 Վախթանգ Անանյան, Երկեր 4 հատորով, հատոր 4, Երևան, 1984 –
 ՎԱԵ4:

Վանո Սիրադեղյան, Ձեռքդ ետ տար ցավի վրայից, Երևան, 2000 – ՎՍՁԵՏՑՎ:

Վիկտոր Բալայան, Անցյալը երբեմն մեռնում է մեզ հետ, երկու գրքով, գիրք առաջին, Երևան, 1980 – ՎԲ1:

ДИСКОНТНОСТЬ В МНОГОКОМПОНЕНТНЫХ ГЛАГОЛЬНЫХ ФРАЗЕОЛОГИЧЕСКИХ ЕДИНИЦАХ

Альберт Погосян

Резюме

Ключевые слова и выражения: *однословный, многословный, классификация по количеству, классификация по синтаксическим отношениям, являющийся членом предложения, не являющийся членом предложения*

Дисконтность никогда не становилась предметом исследования армянских лингвистов. К вопросу дисконтности фразеологических единиц обращались единичные исследователи, и то поверхностно.

В данной статье мы исследуем глагольные многокомпонентные фразеологизмы (состоящих из четырех и больше компонентов) на основании двух принципов: по количественному признаку и по синтаксическому соотношению.

Глагольные многокомпонентные фразеологизмы часто встречаются с одной дисконтной единицей. Она может быть как однословной, так и многословной и чаще всего выступает как член предложения, хотя может и не иметь подобной функции. Дисконтные единицы в речи могут выполнять роль главного и второстепенного членов предложения.

Многокомпонентные фразеологические обороты с двумя дисконтными единицами встречаются редко. В такой ситуации они также могут быть однословными и многословными, выступая в роли любых членов предложения, впрочем, они могут быть лишены данных глоссологических возможностей.

DISCONTINUITY IN MULTI-COMPONENT
VERBAL PHRASAL UNITS

Albert Poghosyan

Summary

Key words: *one-word, polyword, classification by quantity, classification by syntactic relations, being a member of a sentence, not being a member of a sentence*

Discontinuity has never become a subject of study by Armenian linguists. The issue of discontinuity of verbal phrasal units has been addressed by a few researchers, but only superficially.

In this article we study multicomponent verbal phrasal units (consisting of four or more components) based on two principles: by quantitative criteria and by syntactic correlation.

Multi-component verbal phrasal units are often found with one discontinuous unit. It can be either one-word or polyword which most often act as a member of a sentence, although it may not have such a function. Discontinuous units in speech can serve as the principal and secondary members of a sentence.

Multi-component verbal phrasal units with two discontinuous units are rare. In such a situation, they can also be one-word or polyword, act or not act as a member of a sentence.